

ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Յ. Գ. ՂԱԶՈՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳԴՀ պրոֆեսոր

Ինչպիսի ոգևորություն կապրեր Գավառի պետական համալսարանի ողջ անձնակազմը, եթե բախտ վիճակվեր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ներկայությամբ նշելու նրա ծննդյան 85-ամյակը և գիտական գործունեության 60-ամյակը: Զբավականացրեց ընդամենը մեկ տարի: Ինքս անձամբ կյանքիս ամենանշանակալից ու երջանիկ օրը կհամարեի, եթե իհարկե ինձ վերապահվեր Հրանտ Հակոբյանի ներկայությամբ նրա գիտական գործունեությունը ներկայացնելու պատիվը: Ավա՛ղ, արվեց, ոչ իր ներկայությամբ: Արվածը՝ արված, բայց հոգուս ցավը մասամբ է մեղմվում իմ մեծ ուսուցչի հանդեպ իմ պարտքը կատարելու գիտակցումից:

Սովորաբար գիտատեսական ժառանգության վերլուծության նյութ է դառնում այն ամենը, ինչը առաջին հերթին հրատարակված է և ժամոթ գիտական հանրությանը, այնուհետև ուսումնասիրվում ու արժևորվում են տվյալ գիտնականի անտիպ ձեռագրերը, նամակագրությունը և ձեռագիր վիճակում պահպանվող այլ նյութեր: Հազվադեպ ու բացառիկ են այն դեպքերը, երբ դրանց առկայությամբ և ի լրումն այդ ամենի ներկայացվում է անձը ընթացքի մեջ, ժամանակի հոլովությամբ: Մեր համոզմամբ «Ժառանգություն» հասկացությունը շատ ավելի լայն բովանդակություն ունի, ավելի ընդգրկում է, քանի որ ներառում է նաև տվյալ անձի կողմից սերունդներին օգտակար սոցիալական փորձի փոխանցումը: Վերջինս ի հայտ է գալիս միայն անձի և իր ժամանակակիցների փոխհարաբերության ընթացքում և երբեմն դառնում է նույնքան կարևոր, որքան և գրավոր, հրատարակված տեսական աշխատությունները: Մեր նպատակը Հրանտ Հակոբյանի ողջ գիտական ժառանգությունը վերլուծելը չէ, այլ պարզապես նրա տեսական ժառանգության համառոտ ուրվագիծը ներկայացնելը, հետագայում առավել մեծամասշտաբ ուսումնասիրություն և ավելի ծավալուն աշխատանք ներկայացնելու նկատառումով: Մեր նպատակների տեսանկյունից, այն հսկայական սոցիալական փորձը, որին հաղորդ է դարձել մեր հասարակությունը, դուրս թողնել և որևէ կերպ չամրագրել որպես թողած ժառանգություն, մեզ՝ ապրողներիս և հետագա սերնդի համար կարելի է համարել որպես անվերադարձ կորուստ: Ուստի, փորձենք համարձակորեն մի փոքր նորույթ կիրառել և հնարավորության սահմաններում զուգահեռաբար իրար շաղախել և ներկայացնել տպագիր ժառանգությունը և սոցիալական փորձի ժառանգությունը՝ համապատասխան արժեհամակարգերով: Իհարկե, թերևս քիչ, սակայն նախադեպը կա և գալիս է դեռևս իմ ժամանակներից: Հիշենք՝ իր ուսմունքը բանավոր քարոզող և գրավոր գրեթե ոչինչ չթողած Սուրյատը ինչպիսի՞ հսկայական ժառանգություն է թողել իր ժամանակակիցներին՝ բացառապես Պլատոնի միջոցով: Հեգելի աշակերտները հրատարակել են նրա դասախոսությունները: Տեսնում ենք այն, ինչ տպագրված

է, կարող է քննության և արժևորման նյութ դառնալ նաև հաջորդ սերնդի համար: Դրանում այնուամենայնիվ լիարժեք չի զգացվում տվյալ անձնավորության և պատմական ժամանակաշրջանի շունչը: Մինչդեռ օգտակար սոցիալական փորձի վերհանումը պարտավոր են անել տվյալ անձի սերնդակիցները: Ելնելով ընձեռած հնարավորությունից, մշեն, որ ներկայացնելու են հիմնական, հանգուցային, սկզբունքային դրույթները, մինչդեռ ուսումնասիրությունը լինելու է շարունակական: Ներկայացվող նյութը բաժանել ենք 2 մասի: Առաջին մասում հենվելու ենք այն ամենի վրա, ինչը գրված չէ իր կողմից, իր իսկ ձեռքով, միաժամանակ, արտահայտված է, կարդացված ու կատարված է իր կողմից: Այս հատվածում որպես հիմք է ծառայելու դասախոսությունների այն շարքը, որ հատուկ կարդացվել է 1992-1993 թվականներին Գավառի պետական համալսարանի հայցորդների համար, որն ի դեպ ամբողջությամբ գրի է առնվել մեր կողմից: Հիշենք, դա այն տարիներն էին, երբ հումանիտար գիտությունների ոլորտում առանց բացառության, իսկ փիլիսոփայության ոլորտում՝ մասնավորապես, տիրում էին խառնաշփոթությունն ու անորոշությունը: Ոչ հայոց, ոչ ռուսաց լեզուներով չկային փիլիսոփայության մորովի հրատարակած ձեռնարկներ: Այս պայմաններում Հրանտ Հակոբյանի կարդացած դասախոսությունների շարքը խիստ կարևոր էր և բազում հարցերի խորը փիլիսոփայական պատասխաններ էր բովանդակում: Երկրորդ մասում ներառելու ենք Հակոբյանի հրատարակված աշխատություններում քննված խնդիրները: Վերլուծության նման տարբերակն ընտրել ենք այն հստակ համոզմամբ, որ Հակոբյանն էապես տարբերվում էր իր շատ գործընկեր փիլիսոփաներից, քանզի փիլիսոփայությունը նրա համար սոսկ գիտություն չէր, միայն դասախոսություններ կարդալու և գիտական հետաքրքրությունների թեմա չէր, այլ նաև կենսակերպ ու աշխարհայացք էր: Այս իմաստով նրա փիլիսոփայությունը կենսափիլիսոփայություն էր: Սա մշանակում է, որ փիլիսոփայի անգամ առօրեական խոսքը պետք է հագեցած լինի փիլիսոփայական երանգներով և եզրահանգումներով, հնչի իբրև իմաստասիրական խոսք, որպես հումանիտար գիտելիքի բարձրագույն տեսակ՝ մարդասիրական բոլոր սկզբունքներով հանդերձ: Անձի թողած ժառանգությունը դեպքերի իրողության մեջ ներկայացնելիս՝ պետք է հաշվի առնել նրա ապրած ժամանակաշրջանը: Չմոռանանք՝ Հակոբյանի ապրած և գործած ժամանակաշրջանը, ինչպես շատ շատերիս պարագայում, երկատվեց և վերջին հատվածը բնութագրվեց որպես անցումային ժամանակաշրջան: Անցումային հասարակության բնորոշ գծերից մեկն այն է, որ մարդիկ հայտնվում են այլընտրանքային իրավիճակում, որտեղ հնի ու նորի պայքարը ձեռք է բերում ընդգծված գաղափարաքաղաքական և իմաստաարժեքային ուղղվածություն, և նախորդ արժեքների ու նորմերի վերաիմաստավորման, վերագնահատման անհրաժեշտություն է առաջանում: Իրավիճակն ավելի բարդ է մշակութային առումով, աննախադեպ մի երևույթ, երբ մեկ սերնդի կյանքի ընթացքում մշակութային արժեքները փոփոխվում են, մշակութային մեկ շրջափուլը դառնում է ավելի կարճատև, քան մեկ սերնդի կյանքի տևողությունը: Այս պարագայում մարդը կա՛ն դուրս է մղվում մշակութաստեղծ ոլորտից, կա՛ն ձանձրանում դարից, կա՛ն էլ ձանձրացնում մյուսներին: Հակոբյանի պարագայում դրանցից և ոչ մեկը չէր, ապացույցը՝ Գավառի պետական համալսարանի հիմնադրումը՝ որպես կրթության ու մշակույթի օջախ, տասնյակ հոդվածները և

երկու մենագրությունները՝ որպես մշակութային արժեքներ: Նա երբեք երես չթեքեց դարից, այլ կանգնեց դարին դեմ հանդիման, ինչպես վայել է բոլոր ժամանակների մեծ մտավորականներին: Հակոբյանն այս իրողության մեջ ըստ արժանվույն գնահատեց իրենից առաջ եղած ավագ սերնդի վաստակը և առանձնակի հակվածություն դրսևորեց դեպի նոր, երիտասարդ սերունդը՝ մեզ պատգամելով սերնդասիրության դասեր, որ ժառանգել պարզապես պարտավոր ենք: Եվ ամենակարևորը՝ մնաց Մարդ, որովհետև միշտ սիրում էր կրկնել Համլետի մենախոսությունից հետևյալ հատվածը. «Նա մարդ էր, մարդ իսկական»: Կարծում ենք՝ Հակոբյանը համամիտ կլիներ Հակոբ Մովսեսի հետևյալ արժեքավոր մտքի հետ, ով գտնում է, որ երկրագնդի վրա ավելանում է ազգաբնակչության թիվը, բայց պակասում է մարդու քանակը:

Հետխորհրդային ժամանակներում գրված փիլիսոփայության դասագրքերում ոչ լիարժեք էր ներկայացվում «Մարդու պրոբլեմը փիլիսոփայության մեջ» թեման: Փիլիսոփայության հարցերի շուրջ մի գրույցի ժամանակ Հրանտ Հակոբյանին ասացի, որ մարդու մասին չափազանց վատ են գրում, անըմբռնելի է, անմատչելի, անհամոզիչ: Մի խոսքով՝ թեմայի մեկնաբանումը հաջողված չէ: Մի փոքր խորհելուց հետո տվեց հակիրճ բացատրություն, որն ավելին էր, քան դասագրքում եղած նյութը. «Մարդու մասին գրողը նախ ինքը պետք է մարդ լինի ու նաև մեծ, ավանդույթներ ունեցող ազգի զավակ»:

Քայքայված տնտեսություն, ամայացած դաշտեր, անաշխատանք մնացած երբեմնի աշխատավորներ, որոնք և՛ արդյունաբերության, և՛ գյուղատնտեսության, և՛ կազմակերպչական ոլորտում լավ համարում էին ունեցել: Սա էր 20-րդ դարի 90-ական թվականների ծանր իրողությունը: Այս իրողությունը ծնում էր համատարած հուսալքություն, հիասթափություն և մտքի ծուլություն, որը սպառնում էր վերածվել մտքի ամլության: Շատ բան կարելի է հետազայում վերականգնել, մինչդեռ մտքի ամլության թողած հետևանքներն ավելի երկարատև են ու ծանր, անգամ՝ անդամալի: Հակոբյանը պարզապես իր կյանքի գործը համարեց պայքարել մտքի ծուլության և սպառնացող ամլության դեմ: Սա մի սերնդի հոգատարությունն էր մյուսի հանդեպ: Կյանքի հարուստ փորձով, աշխարհայացքային հստակ կողմնորոշմամբ, նա զգում էր, որ հետազայում ամենից շատ կարող ենք ամաչել ամլացած մտքի, քան քայքայված տնտեսության համար, և իր շուրջ համախմբեց տարածաշրջանի մտավորականության ներկայացուցիչներին, գիտության թեկնածուներին, հրավիրեց նաև երևանյան կրթության ու գիտության ոլորտի ճանաչված անձանց՝ այսպիսով նախադրյալներ ստեղծելով Գավառի պետական համալսարանի հիմնադրման համար: Ուստի, համարձակորեն կարող ենք պնդել, որ 1990-ական թվականների սկզբներին համալսարանի հիմնադրումը տարածաշրջանում ավելին էր, քան պարզապես կրթության օջախ ստեղծելը: Համալսարանը լուծեց ու ներկայումս էլ լուծում է սոցիալական մի շարք խնդիրներ: Անձամբ մեր դիտարկմամբ, մի քանի տասնյակ ընտանիքներ արտերկիր գնալու փոխարեն մնացին տեղում: Կան ընտանիքներ, որոնց անդամների մի մասը արտերկրում է, մյուս մասը, շնորհիվ համալսարանի, մնացել է հայրենիքում: Բազում երիտասարդներ հրաժարվեցին արտերկիր գնալուց, ծննդավայրը լքելուց, միաժամանակ, ստացան բարձրագույն մասնագիտական կրթություն, ունեցան աշխատանք:

Նա զրուցում էր բոլորի հետ, և այդ զրույցը գիտելիք էր, նա պատմում էր հուշեր, կենդանություն հաղորդելով ու արմատավորելով Պլատոնի տեսությամբ՝ հուշը իբրև գիտելիք հազվագյուտ ժառանգություն է, ամենաթանկագինը և բացառիկը: Ինքը՝ Հակոբյանը, անչափ կարևորելով հուշ-գիտելիքը՝ պրակտիկորեն այն իրականացրեց «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» աշխատության մեջ, որտեղ հենց առաջաբանում նշում է. «...որպես համալսարանի հիմնադրման առաջին դերակատար ու ականատես, որոշեցի շարադրել սույն էջերը ..., ինչի հետևանքով էլ շարադրանքը կրում է հուշագրության բնույթ...¹»:

Կարծում ենք, ամենաապաստավոր պահին է Հրանտ Հակոբյանի թողած ժառանգությամբ վերաբերել իր իսկ կողմից արմատավորված հետևյալ տեսական դրույթի տեսանկյունից՝ անցած-գնացած ժամանակների մասին խոսք ասելիս՝ պահպանել սերունդների հանդեպ պատմական արդարացիության սկզբունքը, որը կիրառված է որպես հիմնական մեթոդաբանական սկզբունք բոլոր հրատարակած գործերում և բանավոր խոսքում: Ցանկացած փիլիսոփայի համար ելակետային, այսինքն՝ հիմնարար, սկզբունքային են փիլիսոփայության՝ որպես գիտական գիտելիքի ծագման, բնական գիտությունների ու արվեստի հետ նրա փոխառնչության պարզաբանման հարցերը: Դրանք հատկապես կարևորվում էին 1990-ական թվականների մարքսիստական փիլիսոփայության ճգնաժամային փուլում: Հրանտ Հակոբյանն իր դասախոսություններում մերժելի համարեց այն տեսակետը, որ փիլիսոփայությունը ծագել է կրոնի դեմ մղված երկարատև պայքարի ընթացքում կամ այն քննադատելու արդյունքում: Նման մոտեցման դեպքում ընդհանրապես անտեսվում է իդեալիստական փիլիսոփայությունը կամ էլ այն անհարկի նույնացվում կրոնի հետ, մինչդեռ դրանք տարբեր աշխարհայացքային ձևեր են: Հակոբյանը և՛ ներկայացրեց, և՛ քննության առավ փիլիսոփայության ծագման վերաբերյալ եղած բոլոր տեսակետները՝ պարզելու, թե ինչ հիմքի վրա է ծագել՝ դիցաբանությամբ, ավանդույթի, մարդկության կողմից կուտակած գիտական գիտելիքների: Հակոբյանը գտնում է, որ բոլոր հին ժողովուրդներն էլ ունեցել են աշխարհը հասկացությունների միջոցով բացատրելու իրենց համակարգերը, իսկ դա հենց փիլիսոփայությունն է: Աշխարհը բացատրելու համար փիլիսոփայությունը ունի մեկ ուղի, մեկ ճանապարհ: Դա հասկացություններ կազմելու ճանապարհն է: Հակոբյանը հենվում էր այն հիմնարար գաղափարի վրա, որ փիլիսոփայության միակ զենքը մարդու ինտելեկտն է, միտքը, փիլիսոփայությունը կեցության հիմքերը ռացիոնալ-բանական միջոցներով ճանաչելու ձգտումն է: Փիլիսոփայության ուժը համոզելու մեջ է, իսկ Հակոբյանը շատ լավ էր տիրապետում համոզման մեթոդին: Պատմական զարգացման ընթացքում փիլիսոփայական հասկացությունները ձեռք են բերում համընդհանրական բնույթ, որոնք և անվանվում են կատեգորիաներ: Նա ներկայացնում է նաև բուն «փիլիսոփայություն» եզրույթի առաջին անգամ շրջանառության վերաբերյալ երեք տեսակետները՝ կապված Պյութագորասի, Պլատոնի և Հերակլիտի անվան հետ և այն կարծիքին է, որ դրանք չպետք է հակադրել, քանի որ փոխլրացում են միմյանց և հնարավորություն են տալիս ավելի լավ ըմբռնելու «փիլիսո-

¹ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 10:

փայլություն» հասկացության ողջ խորությունը և բազմիմաստությունը: Արտակարգ վերաբերմունք ուներ թե՛ Արևելքի ժողովուրդների, թե՛ հունական և թե՛ հայկական դիցաբանության նկատմամբ: Դիցաբանությունը դիտում էր որպես անգնահատելի ֆենոմեն, մարդկային իմացության մի նոր աստիճան: Գտնում էր, որ մարքսիզմը դիցաբանությանը քիչ տեղ է հատկացրել՝ գրեթե անտեսելով նրա գիտական արժեքը: Այն շփոթել են կրոնի հետ, երբեմն նույնացրել, մինչդեռ դիցաբանությունը աշխարհը բացատրելու պատմականորեն առաջին ձևն է, որում երևակայությունը գերազանցում է բանականությանը: Քանդելով դիցաբանական մտածելակերպն ու ընկալումները և առանձնացնելով անցյալը, ներկան ու ապագան՝ մարդ արարածը հայտնվեց նոր ժամանակային իրողության մեջ և ստեղծեց փիլիսոփայություն, պատմություն, ընդհանրապես՝ գիտություն ու արվեստ: Դիցաբանությունը անհարկի դիտվել է որպես հետադիմական՝ ռեակցիոն աշխարհայացք և քննադատվել գիտության տեսանկյունից՝ որպես նրա հակադրությունը: Հենվելով հեգելյան դիալեկտիկայի օրենքների վրա, որոնց ի դեպ շատ մեծ նշանակություն էր տալիս, մասնավորապես՝ բացասման բացասումի, նշում է, որ դիցաբանությունը սաղմնային վիճակում ներառում էր գիտական գիտելիքների, արվեստի, կրոնի և փիլիսոփայության բոլոր սաղմերը և որ փիլիսոփայությունն ու գիտությունը դիցաբանությունից վերցրեցին ռացիոնալը, իսկ կրոնը և արվեստը՝ իռացիոնալը: Նկատենք, որ մարքսիզմը չէր ընդունում փիլիսոփայության ծագումը դիցաբանությունից, մինչդեռ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այն ազդերը, որոնք ունեցան լավ դիցաբանություն, ունեցան նաև լավ արվեստ, լավ կրոն և լավ փիլիսոփայություն: Հատկապես շեշտում էր այն, որ դիցաբանությունը հիմք հանդիսացավ բարոյականության ծագման համար, և բարոյականության երկու կատեգորիաները՝ բարին ու չարը, ձևավորեցին մարդկային հանրության բարոյական նկարագիրը: Մարդ արարածը ձգտեց ու ապավինեց բարի ուժերին, հետագայում այդ կատեգորիաները տեղափոխվեցին բարոյագիտության, հոգեբանության ու փիլիսոփայության ոլորտ և դարձան հասարակական հարաբերությունների խորքային ընթերցման և վերլուծության ելակետային հասկացություններ: Հակոբյանը այն համոզմանն էր, որ մարդը դարերի ընթացքում թեև բարոյապես կատարելագործվեց, այդուհանդերձ՝ բարոյական հեղաշրջում չապրեց: Հայցորդների համար կարդացած դասախոսություններում Հակոբյանը առաջին անգամ հետխորհրդային իրականության մեջ փիլիսոփայության դասընթացում ներմուծեց համաշխարհային և հայոց փիլիսոփայության պատմության ողջ նյութը: Դա ինչ որ առումով ժամանակի պահանջն էր, և արդյունքում ստացվեց փիլիսոփայության տեսության և պատմության յուրօրինակ համալիր դասընթաց: Նման մոտեցումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ փիլիսոփայությունը իր պատմությունից անբաժան չէ, իսկ մյուս գիտությունների պատմությունը տվյալ գիտության օրգանական շարունակությունը չէ, տվյալ գիտության մաս չի կազմում, բացի փիլիսոփայությունից: Այս մոտեցումը ներկայումս դեռևս վիճարկելի է: Ոմանք գտնում են, որ փիլիսոփայության պատմությունը պետք է ներառել ընդհանուր փիլիսոփայության ծրագրերում, ուստի՝ նաև փիլիսոփայության դասագրքերում, ոմանք էլ դեմ են այս մոտեցմանը: Հակոբյանը, օգտվելով բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատության ընձեռնած հնարավորություններից, փիլիսոփայության պատմությունը ներառեց

փիլիսոփայության ծրագրերում, հնգամյա կրթական համակարգում և, չնչին փոփոխություններով հանդերձ, այդ ծրագրով դասավանդում ենք մինչ օրս: Յուրաքանչյուր կիսամյակ, դասընթացն ավարտելիս, քննությունների ընթացքում (քննությունները հիմնականում ընդունում էինք միասին) նկատել ենք, որ ուսանողներն առավել հակված են փիլիսոփաների ուսմունքները յուրացնելուն, կատարել ենք հարցումներ, որոնց արդյունքում ևս պարզվել է ուսանողների զգալի մասի հակվածությունը փիլիսոփաների և նրանց ուսմունքների նկատմամբ, հատկապես Արիստոտելի, Պլատոնի, Բեկոնի, Դեկարտի, Կանտի, Զեգելի և այլոց տեսությունների հանդեպ: Հեռակա ուսուցման համակարգում մանկավարժ և պատմաբան մի քանի ուսանողներ լրացուցիչ ցանկացել են Շոպենհաուերի ու Ֆիխտեի փիլիսոփայական համակարգերի մասին տեղեկություններ ստանալ: Տարիներ հետո, երբ շրջանավարտներին էինք հարցեր ուղղում՝ մնացորդային գիտելիքը ստուգելու նպատակով, նկատել ենք, որ նրանց հիշողության մեջ ամենալավը պահպանվել է փիլիսոփայության պատմության նյութը:

Դասախոսությունների հենքում այն դիրքորոշումն է, որ փիլիսոփայության առարկան և մեթոդը սահմանելը միշտ եղել է հենց իր՝ փիլիսոփայության առաջնային խնդիրներից մեկը: Ինչի մասին էլ խորհրդածի, փիլիսոփայությունը միաժամանակ խորհրդածում է ինքն իր մասին: Փիլիսոփայությունը ինքը պետք է որոշի իր կարգավիճակը, տեղը մարդկային գիտելիքի հարուստ զինանոցում: Այդ բանը ոչ ոք չի կարող անել նրա փոխարեն: Իսկ դա փիլիսոփայությանը հաջողվել է բարձր ինքնագիտակցության շնորհիվ, որն էլ նրա առանձնահատկություններից մեկն է: Հակոբյանը փիլիսոփայության երկու ուղղությունների՝ մատերիալիզմի և իդեալիզմի վերաբերյալ ուներ իր հստակ դիրքորոշումը, երկուսին էլ վերաբերում էր որպես փիլիսոփայության հարազատ զավակների և նշում էր, որ դրանց հակադրությունը սրվեց հատկապես մարքսիստական փիլիսոփայության առաջացումից հետո: Ինչևէ, պատմական տարբեր ժամանակաշրջաններում ուղղություններից մեկը մյուսի նկատմամբ գերազանցություն ունեցել է, մատերիալիզմը՝ հասարակական հարաբերությունների և բնության ուսումնասիրման, իսկ իդեալիզմը՝ իմացաբանական հարցերում, սակայն երկուսն էլ միասին հարստացրել են փիլիսոփայական գիտելիքը: Իր անձնական համակրանքը մատերիալիստական փիլիսոփայության կողմն էր, որն արտահայտվեց 1995թ. Ալեքսեևի և Պանինի հեղինակած փիլիսոփայության դասագրքերի վերաբերյալ կարծիք հայտնելիս: Ի դեպ, դասագրքում նմանատիպ դիրքորոշում ունեին Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հիշյալ պրոֆեսորները: Սրտովը չէր, որպես կարգախոս, բոլոր փիլիսոփայական դասագրքերում ձևակերպված այն արտահայտությունը, որ միջնադարում փիլիսոփայությունը եղել է կրոնի աղախինը, որովհետև ներմուծելով փիլիսոփայական կատեգորիաներ՝ աստվածաբանությունը դարձավ կրոնափիլիսոփայական հզոր հոսանք, ուստի «աղախինի» փոխարեն ավելի տրամաբանական էր համարում գործածել «սպասավոր» տերմինը, որն ավելի լավ է արտահայտում փիլիսոփայության կարգավիճակը այդ դերում: Հակոբյանի կարդացած փիլիսոփայությունը լսվում էր ու սիրվում՝ ինքնատիպ ոճի, հետաքրքիր մատուցման և համեմված օրինակների շնորհիվ: Հետևելով հեգելյան սկզբունքներին՝ նա փիլիսոփայությունը կտրում է գետնից, բարձրացնում երկինք, աստվածացնում և իջեցնում երկիր: Նրա

կարդացած դասախոսությունը գիտականի ու գեղարվեստի հատման միջակայքում էր, այս առումով շատ բարձր էր դասում Հիպոլտ Թենին, որով և ցույց էր տալիս փիլիսոփայության՝ դեպի արվեստը ունեցած հակումը: Այս առումով Հակոբյանի թողած կարևոր ժառանգությունն այն էր, որ փիլիսոփայության դասախոսությունը նրա համար լսարանում մի յուրահատուկ խոստովանանք էր աշխարհում մարդու տեղի, դերի ու ճակատագրի մասին: Նկատենք՝ խոստովանությունը հղկում է մարդուն, իսկ ինքնախոստովանությունը ճշմարտության հայտնաբերումն է: Խոսելով հասարակագետ գիտնականի առաքելության մասին, առանձնակի, կասե՛ի՝ խրոխտ շեշտադրությամբ, նշում էր, որ հասարակագետ գիտնականը պետք է իմանա, թե որտեղ է սահմանում նշաձողը, իսկ այն պետք է լինի ամենաբարձր կետում, դրա համար համարձակություն է պետք, որը անվանում ենք գիտական խիզախություն: Այսպես, օրինակ, մի շարք հարցերի շուրջ վիճարկելով սովետահայ անվանի հասարակագետների կարծիքը, գրում է «... որ մի շարք առանցքային պրոբլեմների հետ համաձայնելը կլիներ անհիմն»²:

Հրանտ Հակոբյանը հայ իրականության մեջ առաջինը հիմք դրեց հայ գրողների փիլիսոփայական հայացքների մեծամասշտաբ կամ լայնածավալ ուսումնասիրությանը և մինչ օրս մնում է չգերազանցված: Մինչ Հակոբյանը նման մասշտաբային, ընդգրկուն ուսումնասիրություն հայազգի ոչ մի փիլիսոփա չէր կատարել: Կային մեկ-երկու ոչ այնքան նշանակալից նախադեպեր: Այսպես, 1911թ. մասնագիտությամբ փիլիսոփա Երվանդ Ֆրանգյանը փիլիսոփայության տեսանկյունից վերլուծել էր Ավետիք Իսահակյանի ընդամենը մեկ պոեմ՝ «Աբու-Լալա Մահարին», այն էլ մեթոդոլոգիական սխալ հիմքից ելնելով, այն է՝ «Աբու-Լալա Մահարին» գնահատելով որպես փիլիսոփայական երկ, ինչպես Նիցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտը», իսկ Իսահակյանին էլ դիտում էր ոչ որպես պոետի, այլ որպես փիլիսոփայի: Դրանից հետո մինչև 1980-ական թվականների կեսերը հայ իրականության մեջ այս առումով գրեթե ոչինչ չի փոխվել, և իրավիճակը նույնն էր մինչև 1980-ական թվականների վերջերը: Հ. Հակոբյանն իր «Հայ հեղափոխական դեմոկրիտների փիլիսոփայական հայացքները» աշխատության մեջ, դժգոհելով նման մոտեցումից, նշում է. «... ընդհանրապես հայագետ փիլիսոփաները հազվադեպ են զբաղվել գրողների փիլիսոփայական աշխարհայացքի գնահատման հարցերով, իսկ Րաֆֆիով՝ առավելա»³: Իսկ ինչու՞ է Հակոբյանը նմանատիպ ուսումնասիրությունը համարում անհրաժեշտ: Երկու հիմնավոր պատճառներով, առաջին՝ ոչ բարենպաստ պայմաններում փիլիսոփայական, ինչպես նաև սոցիալ-քաղաքական գաղափարները տարածվում են գեղարվեստական գրականության և հրապարակախոսության միջոցով և երկրորդ՝ արվեստը հուզականորեն ավելի ուժեղ է արտահայտում դարաշրջանի հոգևոր առանձնահատկությունները: Թեև անձնային հուզական կողմը առկա է և՛ արվեստում, և՛ փիլիսոփայության մեջ, սակայն արվեստում այն գերիշխող է: Այս հարցում Հակոբյանը համամիտ է Գերցենի այն մտքի հետ, որ մեծ քաջություն է պետք բարձրաձայն ասելու այնպիսի բաների մասին, որոնք լռելյայն հայտնի են ամեն մեկին և որ այդպիսի հանդգնության համար մահվան դատապարտեցին Սոկրատեսը:

² Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 4:

³ Նշվ. աշխ., էջ 16-17:

տին և եզրակացնում է. «...գեղարվեստական գրականությունը մնում է այն հիմնական միջոցը, որով կարելի է արտահայտել այն, ինչի մասին ուրիշները լռում են»⁴: Մասնավորապես, անցում կատարելով իր կողմից ուսումնասիրված հեղինակներին, Հակոբյանը նշում է, որ կան տեսաբաններ, որոնք այն կարծիքին են, որ ո՛չ Րաֆֆին, ո՛չ Սվաճյանը և ո՛չ էլ Պարոնյանը փիլիսոփայական գործեր չեն գրել, ուստի կարիք չկա նրանց փիլիսոփայական հայացքները քննելու և գնահատելու: Նա այդ կարծիքներն անհիմն է համարում, գտնելով, որ «...հետազոտողը նրանց փիլիսոփայական հայացքները պետք է որոնի հրապարակախոսական և գեղարվեստական ստեղծագործություններում, այդ հայացքները հաճախ պետք է ենթադրի տրամաբանորեն՝ ելնելով ստեղծագործության, մտածողների աշխարհայացքի ընդհանուր բնութագրումներից, այն նպատակներից, որոնք փորձել են իրականացնել հայ մտածողները»⁵: Հակոբյանը այն կարծիքին է, որ ողջ տեսական ժառանգությունը պետք է ուսումնասիրել, խորությամբ վերլուծել, խուսափել հապճեպությունից, որպեսզի սխալ եզրահանգումներ չկատարվեն, յուրաքանչյուր դրույթ հիմնավորելիս՝ հնարավորության դեպքում մեջբերում կատարել: Նա իր կողմից ուսումնասիրված հեղինակների աշխատությունները դարձրել է համակողմանի վերլուծության առարկա: Սրան զուգահեռ Հակոբյանը կիրառում է նաև մեկ այլ մեթոդ, մեջբերում կատարելիս գրում է. «Այնքան դիպուկ է ասված, որ որևէ մեկնաբանություն ավելորդ է»⁶: Կոնկրետ օրինակներով Հակոբյանն ապացուցում է, որ արվեստի շատ տեսակներ, այդ թվում՝ գրականությունը, հենվում են փիլիսոփայական որոշակի հիմնադրույթների վրա, միաժամանակ՝ յուրաքանչյուր դարաշրջանում իշխող փիլիսոփայական ուղղություններն էլ փոխադարձաբար ազդում են նույն ժամանակաշրջանի արվեստի վրա: Քաջածանոթ լինելով հայ և համաշխարհային գրականությանը՝ Հակոբյանը լուրջ ուշադրություն դարձրեց և կարևորեց արվեստի՝ ընդհանրապես, և գրականության՝ մասնավորապես, հակումն ու միտվածությունը դեպի փիլիսոփայությունը, որը այլ բնորոշմամբ արվեստի գեղարվեստական-հայեցակարգային (կոնցեպտուալ) գործառույթն է, որում արվեստը հանդես է գալիս որպես աշխարհի վիճակի ուրույն վերլուծություն: Ի դեպ, արվեստի, գրականության դեպի փիլիսոփայությունը ունեցած հակվածության ջատագով էր նաև ակադեմիկոս Բրուտյանը, ով 1990-ական թվականների սկզբից մինչև 2000 թվականի կեսերը փիլիսոփայության մասնագիտական խորհրդի նախագահին էր, իսկ Հակոբյանը՝ խորհրդի անդամ: Այս հարցում ևս Հակոբյանը հավատարիմ մնաց իր սկզբունքներին և Հակոբյան-Բրուտյան համագործակցության արդյունքում ձևավորվեց իմ ատենախոսության ուղղվածությունը. «Ավետիք Իսահակյանի գրական ժառանգության աշխարհայացքային-փիլիսոփայական տեսանկյունները»: Թեման հաստատվեց Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության պատմության ամբիոնում, ղեկավար հաստատվեց Հրանտ Հակոբյանը: Պաշտպանությունից հետո նա խորհուրդ տվեց գրիչը վայր չդնել և շարունակել հետազոտու-

⁴ Նշվ. աշխ., էջ 34:

⁵ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 70-71:

⁶ Նշվ. աշխ., էջ 70-71:

թյունը: Անմիջապես անցա թունանյանի և Նար-Դոսի որոշ գործերի փիլիսոփայական վերլուծությանը, տպագրեցի հոդվածներ, որոնք ևս արժանացան Հակոբյանի հավանությանը:

Հակոբյանը նկատել է, որ բացասական հետևանքներ է ունենում այն, որ հայագետ փիլիսոփաները չեն անդրադառնում հայ գրողների փիլիսոփայական աշխարհայացքի վերհանմանը: Այդ մասին նա գրում է. «Եվ ահա 1920-1930-ական թվականներին գրողների աշխարհայացքի գնահատման հարցում գրականագիտության մեջ իշխող դարձավ մի չափանիշ, ըստ որի այն հեղինակները, որոնց գրական ուղղությունը համարվեց ռեալիզմը, անվերապահորեն հռչակվեցին մատերիալիստներ, իսկ այն հեղինակները, որոնք ճանաչվեցին որպես ռոմանտիկներ, անմիջապես համարվեցին իդեալիստներ, իսկ քաղաքականության մեջ՝ կամ լիբերալներ, կամ պահպանողականներ: Վերջիններիս բախտին արժանացավ և Րաֆֆին»⁷: Հակոբյանը նախ միանշանակ չի համարում «ռոմանտիզմ» և «ռեալիզմ» հասկացությունների և «մատերիալիզմ» ու «իդեալիզմ» փիլիսոփայական ուղղությունների միջև եղած անմիջական կապը, երկրորդ՝ վիճարկում է արվեստագետներին՝ ընդհանրապես, և գրողներին՝ մասնավորապես, ռեալիստների և ռոմանտիկների բաժանելու՝ տվյալ ժամանակաշրջանի որդեգրած չափանիշներն ու սկզբունքները: Եթե սրան հավելենք և այն, որ Հակոբյանի կողմից ուսումնասիրված հեղինակները ապրել ու ստեղծագործել են մի ժամանակահատվածում, որը ինչպես եվրոպական գրականության ու տեսական մտքի մեջ, այնպես էլ հայ իրականության մեջ հայտնի է որպես համադրականության շրջան, երբ առանձին գրողներ իրենց ստեղծագործություններում, միաժամանակ հետևելով տարբեր ուղղությունների, փորձում էին ստեղծել համադրական արվեստ, իսկ փիլիսոփայությունից ներառում էին բազմաթիվ սկզբունքներ, հասկացություններ, ինչն էլ հաճախ հակասությունների պատճառ էր դառնում, ապա Հակոբյանի կողմից արված տեսական եզրահանգումները մտքրեցին որոշակի հստակություն և հետագա ուսումնասիրությունների համար ծառայեցին ու ծառայելու են որպես մեթոդաբանական նշանակության սկզբունքներ: Հրանտ Հակոբյանը անդրադարձավ ոչ միայն անցյալի հայ գրողների, այլև ժամանակակից, իր սերնդի, կասեինք՝ իր հասակակից գրողների գործերի վերլուծությանը՝ փիլիսոփայական տեսանկյունից: 1984թ. հրատարակված «Հասարակական հոգեբանության փոփոխությունների արտացոլումը ժամանակակից հայ արձակույթում» աշխատության մեջ նա քննության է առնում Վարդգես Պետրոսյանի, Գևորգ Արշակյանի, Հրանտ Մաթևոսյանի և Մուշեղ Գալշոյանի գործերը: Աշխատության հիմքում դրված է այն գաղափարը, որ դարեր ի վեր մարդկային առաջադիմական միտքը այս կամ այն ձևով փորձել է բացահայտել մարդու հոգեկան աշխարհը: Այդ խնդիրը փորձել են լուծել բազմաթիվ գիտություններ և արվեստը՝ իր բոլոր տեսակներով, սակայն մարդու հոգեբանության նրբին լարերի ուսումնասիրման և իմաստավորման մեջ իր պատկառելի տեղն է ունեցել և ունի գեղարվեստական գրականությունը: Հակոբյանը նկատել է, որ համաշխարհային ճանաչում գտած բոլոր գրողների գործերում, բացի ազգային-անհատական և խմբերի ու խավերի հոգեբանության մեկնաբանումներից, փայլուն կերպով վեր է հանված այն, «... ինչ համամարդկային է մարդու հոգեբանության մեջ:

⁷ Նշվ. աշխ., էջ 17:

Սակայն բոլոր դեպքերում համամարդկայինը չի կարող ստեղծվել առանց անհատական և ազգային հոգեբանությունների վառ դրսևորումների»⁸: Հիշյալ դրույթը ապացուցելու նկատառումներով նա անդրադարձ է կատարում Շեքսպիրի գործերին՝ նշելով՝ «...Շեքսպիրի Համլետի կերպարը չէր կարող համոզիչ լինել, եթե նա չլիներ վերածննդի մարդ, որը մեկ ոտքով կանգնած էր միստիցիզմի դիրքերում, իսկ մյուսով քայլ էր արել դեպի ազատախոհությունը, եթե նա չարտահայտեր սառը խորհրդածություններով ապրող դանիացու հոգեբանությունը: Երբ Համլետի համար պարզվում է, որ հայրը եղել է հորեղբոր խարդավանքի զոհը, փոխանակ դիմելու սրին, բացականչում է. «Դե գործի՛ր, միտք իմ», իսկ եթե այդ հերոսը լիներ հայ, լեզգի կամ տաթարյուն արևելցի, արդյո՞ք այդպիսի վերաբերմունքը կդառնար տիպական և համոզիչ»⁹:

Վարդգես Պետրոսյանի գործերը վերլուծելիս՝ Հակոբյանը նկատում է, որ նա առանց ընկրկելու և խուսաճանալու՝ խարազանում է այն հիմք, որը արգելակում է հասարակության առաջընթացին և խրախուսում ու ջատագովում է այն նորը, որով իմաստավորվում է մեր կյանքը: Վարդգես Պետրոսյանը երկու սերնդի տարածայնությունները բնորոշում է որպես «հին և նոր սերնդի գրույց»: Հակոբյանը նման բնորոշումը համարում է հնարավորինս մեղմ և գրում է. «...իրականում դա հին և նոր սերունդների մտածելակերպի, հոգեբանության, աշխարհըմբռնման բախումն է»¹⁰: Ազգային կոլորիտը, հոգեկերտվածքը, ազգային բնավորությունը պատմականորեն փոփոխվող երևույթներ են և ոչ թե մեկընդմիշտ սահմանված որակներ: Ըստ Հակոբյանի՝ Վարդգես Պետրոսյանը դա ճիշտ է ըմբռնել: Հրամտ Հակոբյանը հետևյալ փիլիսոփայական հետևությունն է կատարում. «...Վ. Պետրոսյանի ստեղծագործության օբյեկտիվ վերլուծությունը հետազոտողին բերում է այն համոզման, որ հեղինակը երբեք էլ մերկապարանոց կերպով չի ժխտում անցյալի մեր լավագույն ավանդույթներն ու սովորույթները, մեր ազգային հոգեբանության մեջ եղած կարևոր արժեքները, այլ ամենայն երկյուղածությամբ է վերաբերվում դրանց և բոլոր դեպքերում ձգտում է ներդաշնակել հին լավագույնը նորի, առաջավորի հետ, այլ կերպ ասած, Վ. Պետրոսյանը կողմնակից է դրանց համատեղմանը»¹¹:

Կուզենայի հատկապես ուշադրություն հրավիրել կարծես հավերժականի երանգավորում ստացած Հրամտ Հակոբյանի և Վարդգես Պետրոսյանի հետևյալ երկխոսությանը: Աշխատության մեջ, անդրադառնալով Վարդգես Պետրոսյանի կողմից հուղարկավորության նկարագրած օրինակներին, Հակոբյանը իր հերթին ավելացնում է նաև հատկապես քսաներորդ դարի 70-80-ական թվականներին մեր տարածաշրջանին բնորոշ գերեզմանատանը գցվող ճոխ սեղանների և այլ արարողակարգերի մասին: Չնայած դրան, զուտ մարդկայնորեն և՛ հեղինակին հասկանալով, և՛ ժողովրդի հոգեբանությանը քաջածանոթ լինելով, ուղղակի

⁸ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հասարակական հոգեբանության փոփոխությունների արտացոլումը ժամանակակից հայ արձակում, Երևան, 1984, էջ 7:

⁹ Նշվ. աշխ., էջ 7:

¹⁰ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հասարակական հոգեբանության փոփոխությունների արտացոլումը ժամանակակից հայ արձակում, Երևան, 1984, էջ 9:

¹¹ Նշվ. աշխ., էջ 15-16:

մեջքերում է հեղինակի խոսքը, կարծես ներքուստ նրա հետ կիսելով մտքերը խնդրո առարկայի յուրահատուկ ու բարդ բնույթի մասին. «Բայց ներկայանում է տխուր առիթ, և մենք ինքներս անում ենք նույնը: Կարգ է, ազգային ավանդություն: Հասկանում ենք, ապստամբում, բայց...անում ենք: ...Բայց երևի ժամանակն է հարց տալու՝ որքա՞ն կտևեն այս ծայրահեղությունները: Չգիտեմ, ես պարզապես արձանագրում եմ, փորձում մտածել ու հասկանալ»¹²: Ի հավելումն այս խորհրդածության՝ Հակոբյանը գտնում է, որ սա ոչ միայն գրողների, այլև ողջ հասարակության, մտավորականության, տեղեկատվության միջոցների խնդիրն է: Հակոբյանի մանկությունը անցել է գյուղում, հասուն տարիքում նա ապրել է քաղաքում, այնուհետև՝ մայրաքաղաքում: Նա լավ գիտեր թե՛ գյուղացու, թե՛ բանվորի և թե՛ մտավորականի հոգեբանությունը, հաղորդ էր նրանց աշխարհընկալմանը, աշխարհայեցողությանը, աշխարհայացքին: Ասել է՝ նրա համար հասարակության մեջ ոչ մի խմբի, խավի ու շերտի հոգեբանության համդեպ փակ ծալքեր ու չբացված գաղտնիքներ չկային: Եվ գուցե դա էր պատճառը, որ առանձնակի վերաբերմունք ուներ Մուշեղ Գալշոյանի և Հրանտ Մաթևոսյանի արձակի հանդեպ: Անդրադառնալով Մուշեղ Գալշոյանի «Բովտուն» վեպին, պարզ ու հստակ ցույց է տալիս, որ ինչքան էլ գյուղում փոխվեն սեփականության, դրա հետ կապված նաև տնտեսության կառավարման ձևերը, այնուհանդերձ գյուղացու համար դարերով գործում է մի անխախտ օրենք՝ գյուղացու աշխատանքը սեզոնային է, այն սկսվում է արևածագին ու ավարտվում արևամուտին, առանց շաբաթ ու կիրակի օրերի: Աշխատավոր, հողագործ մարդը ասում է ծուլությունն ու անբարոյականությունը: Աշխարհայացքային, հոգեբանական տեսանկյունից քննելով հիշյալ խնդիրը՝ Հակոբյանը, չթաքցնելով իր համակրանքը վեպի հերոսներից մեկի՝ Բագրատի հանդեպ, գրում է. «Բագրատը հողին հարազատ աշխատավոր է: Նա այդ ժառանգել է իր պապերից, նա շատ լավ է հասկանում, որ գյուղատնտեսական աշխատանքը հետաձգել չի կարելի, այն չի կանոնակարգվում գործարանային աշխատաժամանակով»¹³: Հակառակ Բագրատի՝ գյուղում կային հմի ու նորի փոխհարաբերությունը չընկալած անձինք, ովքեր նոր պետական տնտեսության պայմաններում աշխատում էին ժամով և կիրակի օրերին դաշտ դուրս չէին գալիս: Հակոբյանը պատկանում է այն անձանց շարքին, ովքեր ընդունում են մտավորականի, մասնավորապես հասարակագետ գիտնականի բարոյական պատասխանատվությունը հասարակության առջև: Վերջիններս ստանձնում են իրենց ապրած ժամանակաշրջանում հասարակության, պատմության կնճռոտ երևույթների վերհանման հանձնառությունը: Նա առանձնակի մոտեցում ուներ պատմաբանի մասնագիտության հանդեպ՝ կարևորելով պատմաբանի գիտական բարեխղճության ու պատվախնդրության հարցը: Բնագետը բացահայտում է բնության գաղտնիքները, իսկ պատմաբանն ու փիլիսոփան կոչված են բացահայտելու պատմության գաղտնիքները: Ինչպես անհատի, այնպես էլ ազգի ունեցածը մի բան է՝ պատմությունը: Պատմության ունեցածը փաստն է ու եղելությունը: Հակոբյանը միշտ շեշտադրում էր պատմական իմացության բարդությունը: Այն ապացուցելու համար բերում էր հետևյալ

¹² Նշվ. աշխ., էջ 18:

¹³ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հասարակական հոգեբանության փոփոխությունների արտացոլումը ժամանակակից հայ արձակում, Երևան, 1984, էջ 24:

օրինակը. եթե ֆիզիկոսը կասկածում է փորձի արդյունքներին, նա կարող է այն կրկնել և ճշգրտել: Նրա տրամադրության տակ եղած առկա օբյեկտները ցանկացած պահի կարող են պատասխան տալ կասկած հարուցած հարցերին: Պատմաբանի դեպքում հարցն այլ է: Նրա փաստերը պատկանում են անցյալին, իսկ անցյալը հեռացել է: Պատմությունը էմպիրիկ, փորձնական դիտարկման ենթակա չէ: Պատմական իմացության առաջին և ամիջական օբյեկտները փաստաթղթերն են ու պատմական, մշակութային հուշարձանները: Հակոբյանի մտահաղացմամբ՝ պատմական, մշակութային օբյեկտի ֆիզիկական պահպանումը դեռ ամբողջը չէ, նրա մեջ եղած հոգևորը պետք է պահպանել կարողանալ: Մշակութային օբյեկտը նյութականի և հոգևորի միասնությունն է: «Կրկնությունը գիտության մայրն է» դրույթը նրա համար ավելին էր, քան լոկ հերթական կարգախոս: Հակոբյանը շեշտում է, որ պատմությունը չափտի մոռացության տալ, այն միշտ պիտի հիշել, հիշողությունը դառնում է կարևոր գործոն, շնորհիվ որի վերականգնում են պատմությունը: Այս մտայնությամբ էր ձեռքն առնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որի նկատմամբ ուներ արտակարգ՝ պաշտամունքի աստիճանի հասնող վերաբերմունք, և պատահական չէ, որ 1995թ. Կամո քաղաքի ու մարզի անվանակոչության կապակցությամբ պատգամավորների քաղաքային խորհրդի նիստերին, որպես զեկուցող, Հակոբյանը ներկայացավ՝ հղումներ անելով Խորենացու աշխատությունից: «Հայոց պատմությունը» նա համարում էր մեր ազգի անձնագիրն ու գլխավոր վկայականը:

Հրանտ Հակոբյանը այն հաստատ համոզմանն էր, որ անցյալը միշտ էլ ներկայի վրա իր հետքը թողնում է բազմաթիվ առումներով, ուստի պատմաբանը պետք է դրա վրա ուշադրություն դարձնի: Պատմաբանը և պատմության փիլիսոփան պետք է կարողանան պարզել, թե մեր այսօրվա ձեռքբերումների կամ դժբախտությունների մեջ որքան է անցյալի բաժինը: Թիկունքում ունենալով Խորենացուն, Հակոբյանը լուրջ ուշադրություն է դարձնում այն պատմական դարաշրջանի լուսաբանմանը, որի շրջանակներում աշխատել ու գործել են իր իսկ կողմից ուսումնասիրված հեղինակները, միաժամանակ, ցավով ընդգծելով, որ հայագիտության մեջ հեղինակություններ համարվող մի շարք մտավորականներ անհրաժեշտ և բավարար չափով չեն լուսաբանել պատմական այն դարաշրջանը, որում գործել է Ռաֆֆին, բացի այդ, նաև տուրք են տվել ժամանակի ոգուն: Այդ մտավորականների թվին է դասում Ա. Տերտեռյանին, Ս. Խանգադյանին, Հ. Սուրխաթյանին: Արդյունքում ստացվեց, որ միմյանցից չսահմանազատվեցին հայրենասիրական գաղափարներն ու նացիոնալիզմը: Հակոբյանը գրում է. «Հայրենասիրական մտքի ամեն մի դրսևորում դիտվում էր որպես նացիոնալիզմ, իսկ հայրենասերը՝ «...ժողովրդի թշնամի»»¹⁴: Հակոբյանը կենսափորձով էր համոզվել, որ այլ է մեծ ազգերի հոգեբանությունը, այլ՝ փոքր ազգերի հոգեբանությունը: Մեծ ազգերը փորձում են սեփականաշնորհել պատմությունը, փոքր ազգերը ձգտում են ապավինել ազգային մշակույթին, ամրագրել իրենց տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ, պահպանել սեփական պատմությունն ունենալու իրավունքը: Հայ ժողովրդի պատմությունն ունենալու իրավունքի մի տևական ու բարդ ժամանակահատվածի իրողության և եղելություն-

¹⁴ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 15:

ների պատկերը Հակոբյանը նկատեց ու վեր հանեց Ռաֆֆու գործերում, այն Ռաֆֆու, որին ոչ վաղ անցյալում համարում էին «Ժողովրդի թշնամի»: Իսկ ինչու՞ Ռաֆֆի: Ով-ով, բայց Հակոբյանը լավ գիտեր մնայուն և վաղանցուկ արժեքների տարբերությունը և չգնաց հեշտ ու հանգիստ, տրորված ճանապարհով, որը նույն հեշտությամբ էլ այսօր կմոռացվեր: Մտերիմները գիտեն նրա թեկնածուական դիսերտացիայի հետ կապված բարդությունները, ձգձգման պատճառները, բայց գուցե քչերը գիտեն, որ համառորեն առաջարկել էին այդ ժամանակների ոգուն համահունչ, չարչրկված թեմաներ՝ կապված կամ դաշնակցության ռեակցիոն էության, կամ Հայաստանում բուլշևիզմի տարածման հետ: Այս առիթով Հրանտ Հակոբյանը հիշում է հայրիկի հորդորը. «Ուստա Խաչատուրն ասաց՝ չլինեն, չիմանան, ոչ մեկի դեմ և ոչ էլ մյուսի օգտին ոչ մի տող չես գրելու, այդ գնով ձեռք բերած թեկնածուականը մեզ պետք չէ»:

Այս հարցում ևս Հակոբյանը գնաց իր ուրույն, բայց դժվարին ճանապարհով: Գիտական հետազոտության կենտրոնում ունենալով Ռաֆֆուն, նախ նրան բնորոշեց որպես մի անձնավորության, որն ուներ հմուտ պատմաբանի և խորաթափանց փիլիսոփայի միտք: Ռաֆֆին պատմավիպասան էր, ուստի չէր կարող շրջանցել կամ խուսափել պատմական երևույթների փիլիսոփայական մեկնաբանություններից, և նույն տրամաբանությամբ Ռաֆֆուն ուսումնասիրող փիլիսոփան ևս առնչվում է պատմության փիլիսոփայության հարցերին: Մարդ արարածին բոլոր ժամանակներում ներհատուկ են սեփական կեցության հետահայաց գնահատման պահանջն ու ցանկությունը, այսինքն՝ ներկան հասկանալու համար մարդը ձգտում է իրենից առաջ եղած ողջ կեցությունն ու կացությունը իմանալ, դեռ ավելին՝ գալիքն էլ կանխատեսել: Հենց նման մտայնությամբ էլ Վոլտերը 1765թ. առաջին անգամ օգտագործել է «պատմության փիլիսոփայություն» հասկացությունը՝ պատմական ընթացքի մեկնաբանման, մարդու պատմական կեցության նկատմամբ անդրադարձի (ռեֆլեքսիայի) իմաստով: Որքան էլ տարօրինակ թվա, 1990 թվականի սկզբներին մարքսիստական փիլիսոփայության ճգնաժամից հետո պարզվեց, որ այն չի ունեցել իր պատմության փիլիսոփայությունը և որ պատմական մատերիալիզմը պատմության փիլիսոփայություն չէ այդ հասկացության լիարժեք իմաստով, այլ պարզապես պատմության մեկնաբանման բավականին մեղ ու սահմանափակ մի տեսանկյուն է: Համարձակորեն պնդում ենք, որ Հակոբյանը դուրս է եկել այդ մեղ շրջանակներից և Ռաֆֆու գործերը վերլուծել է պատմության փիլիսոփայության դիրքերից՝ ամենալայն իմաստով, ինչն ապացուցելու համար կատարենք մեջբերում խորհրդային ժամանակներում տպագրված մեմագրությունից. «Պատմության զարգացման ոգին և ազգերի պատմությունը ճիշտ ըմբռնելու համար Ռաֆֆին առաջ է քաշում նաև դիալեկտիկական մտածողությանը հարազատ այն գաղափարը, որ պատմությանը բնորոշ է նաև կրկնելիությունը և դա օրինաչափ երևույթ է»¹⁵:

Նկատենք, որ «պատմության զարգացման ոգի» արտահայտությունը բնորոշ է Հեգելի, Թոյնբի, Շպենգլերի փիլիսոփայական համակարգերին: Պատմության կրկնելիությունը ընդունել են փիլիսոփայական շատ դպրոցներ և ուղղություններ, բացառությամբ նորկանտականներ Վինդելբանդի ու Ռիկկերտի: Հակոբյան-

¹⁵ Տե՛ս **Հակոբյան Դ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 104:

նը, ուսումնասիրելով Րաֆֆու հատկապես պատմական գործերը, հանգում է այնպիսի հետևությունների, որոնք արդիական են, տեսականորեն օգտակար այսօրվա բարդ հասարակական հարաբերություններում, ինչպես, օրինակ, հետևյալը. «Հասարակության պատմության վերլուծության ընթացքում Րաֆֆին բազմիցս կատարել է փիլիսոփայական խոր ու դիպուկ եզրահանգումներ և աներեր կերպով կանգնել հասարակության օրենքների օբյեկտիվության ըմբռնման դիրքերում»¹⁶, այսինքն՝ պատմության մեջ գործում են օբյեկտիվ օրինաչափություններ, որոնք չեն կարող հատուկ լինել միայն մեկ ազգի, այլ ընդհանուր են և դրանցից շեղվող ազգը դատապարտված է կործանման: Նկատենք, որ Հակոբյանը օգտագործում է նաև Րաֆֆու՝ «սոցիոլոգիական հայացքների փիլիսոփայական ուղղվածությունը ըմբռնելու համար չափազանց կարևոր է հասարակության նկատմամբ նրա հայացքների պարզաբանման հարցը»¹⁷ դատողությունը, ինչն էլ հիմք է տալիս համոզված պնդելու, որ նա առանձնացնում էր սոցիոլոգիան պատմության փիլիսոփայությունից, վերջինս էլ՝ պատմագրությունից՝ հստակեցնելով նրանց ուսումնասիրության ոլորտները: «Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում» ծավալուն ուսումնասիրության մեջ Հակոբյանը շեշտում է Րաֆֆու հետևյալ միտքը. «Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»¹⁸: Սրանով Հակոբյանը հիմնավորեց, որ 19-րդ դարի հայ պատմափիլիսոփայությունը ուղղված էր ազգային գաղափարի իրականացման անհրաժեշտության հիմնավորմանը: Հիշյալ աշխատության մեջ սկզբից մինչև վերջ շեշտվում է այն գաղափարը, որ ի տարբերություն սովորական, առօրեական իրադրության մեջ մարդ սպանելուն, զանգվածաբար մարդ սպանելը կամ ոչնչացնելը (այդ թվում՝ ազգերին) սովորական երևույթ չէ, նախաձեռնվող և իրականացված սպանությունները հիմնավորելու համար անհրաժեշտ է տեսություններ ստեղծել, մի բան, որ շարունակվում է մինչ օրս, անգամ համաշխարհային մակարդակով (Սախարովի օրինակը, Մերձավոր Արևելքը): Նշված մենագրության մեջ Հակոբյանը սովորեցնում է, հուշում, որ պատմության խառնակ ու ճգնաժամային փուլերում պատմափիլիսոփայությունը դրսևորվում է որպես գաղափարախոսություն և իր մեթոդոլոգիայի շնորհիվ ձեռք է բերում կենսական կարևոր նշանակություն: Հակոբյանը մեզ թողնում է բոլոր ժամանակների համար արդիական հետևյալ տեսական եզրահանգումը՝ միայն շնորհիվ պատմության իմացության մենք ճանաչում ենք մարդկային կեցությունը ամբողջության մեջ: Ասել է՝ պատմության իմաստը կյանքին, հասարակության առաջընթացին ծառայելն է: Իսկ դրա համար պատմաբանն ու պատմության փիլիսոփան պետք է ունենան անցյալը «վերակենդանացնելու», «ապրեցնելու» կարողություն: Հենվելով հեգելյան դիալեկտիկայի սկզբունքների վրա՝ Հակոբյանը հին ու նորի շաղկապման փայլուն օրինակներ է թողել: Մեր կարծիքով, թե՛ իր պրակտիկ գործունեությամբ և թե՛ մենագրություններով նա հավաստում է այն հստակ դիրքորոշումը, որ հասարակագետը, մասնավորապես պատմաբանը, չպետք է ունենա հնավաճառի հոգեբանություն, այլ՝ ուրիշ հոգեբանություն, որ

¹⁶ Նշվ. աշխ., էջ 102:

¹⁷ Նշվ. աշխ., էջ 102:

¹⁸ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում, Երևան, 1999, էջ 45:

ներկայումս շատ անհրաժեշտ է մտավորականներին՝ որպես գործելաոճ ու մեթոդական սկզբունք: Մեր խորին համոզմամբ հատկապես «Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում» մենագրության պատմափիլիսոփայական արժեքն այն է, որ չի կարելի պատմության թատերաբեմից ոմանց ցած բերել (հատկապես հներին)՝ ոմանց համար (հատկապես նորերին) տեղ ազատելու նպատակով: Պատմության թատերաբեմում յուրաքանչյուրը պետք է ունենա իր պատվավոր ու արժանի տեղը, այն էլ՝ օբյեկտիվորեն պայմանավորված: Հակառակ դեպքում պատմությունը վերածնելու խնդիր է առաջանում, որը կարող է մի ամբողջ սերնդի ջանքեր խլել, արժեքային համակարգ ձևախեղել:

* * *

Փիլիսոփայական գիտելիքն ունի իր առանձնահատկությունները, գիտական և զգացմունքային-գեղագիտական կողմերը: Գեղագիտականին արդեն անդրադարձել ենք, իսկ զգացմունքայինը առնչվում է հոգևորին, վերջինս էլ աշխարհայացքային տարր է պարունակում, արդյունքում՝ փիլիսոփայական գիտելիքը նույնպես դառնում է զնահատող գիտելիք: Սա ակնհայտորեն նշանակում է, որ փիլիսոփայական ճշմարտությունը ոչ միայն պետք է ճանաչել և ընդունել միայն բանականությամբ, այլև զգալ սրտով: «Սրտի փիլիսոփայությանը» Հակոբյանը մեծ նշանակություն էր տալիս և հաճախակի օգտագործում «սրտի դատողություն» պատկերավոր արտահայտությունը՝ փիլիսոփայական գիտելիքի զգացմունքային կողմը շեշտադրելու համար: Այս դեպքում փիլիսոփայական գիտելիքը դառնում է համոզմունք, ինչն էլ թելադրում է մարդուն իր ապրելու կերպը: Այս ամենով հանդերձ անհրաժեշտ է նշել, որ աշխարհայացքը և փիլիսոփայությունը ամբողջությամբ չեն համընկնում: Փիլիսոփայությունն ավելին է, քան աշխարհայացքը: Հակոբյանը դրանք երբեք չի նույնացրել, այլ հստակ տարանջատել է «փիլիսոփայություն» և «աշխարհայացք» հասկացությունները՝ ընդունելով, որ փիլիսոփայությունը միակ գիտությունն է, որն իրականացնում է աշխարհայացքային և մեթոդոլոգիական գործառույթներ: Աշխարհայացքի հիմքում ընկած է համոզմունքը, մինչդեռ տոտալիտար հասարակարգում հնարավոր է խզում աշխարհայացքի և համոզմունքի միջև: Նման իրավիճակում փիլիսոփա-տեսաբանը, հանուն անցյալի արժեքների ու ապագայի, փորձում է հաղթահարել այս երկվությունը, նուրբ, քողարկված ձևով որոշ գաղափարներ հարմարեցնել ժամանակի պահանջներին: Այս իրադրությունում խորիմաստ լինելը անհրաժեշտություն է: Ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ ոմանց դա չի հաջողվել և խորհրդային գաղափարախոսության դիրքերից պիտակավորվել ու դուրս են մնացել, կամ մեկուսացվել հասարակական-քաղաքական ու գիտական գործունեությունից: Խնդրո առարկան բարդ է և վիճելի, այն վերաբերում է «հավատ» հասկացությանը: Մեր կարծիքով, խորհրդային գաղափարախոսական համակարգում, այս առումով, հայ մարդուն առանձնակի հոգեկան կարգավիճակ էր վիճակված: Այդ ո՞ր հայ մարդը, մասնավորապես մտավորականը, չէր հպարտանում հայ ժողովրդի կողմից աշխարհում առաջինը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման փաստով: Հասարակական հոգեբանության ու գիտականության մեջ այն ամրագրված էր: Պատեհ առիթով, հատկապես հասարակա-

կան-քաղաքական, քարոզչական-քաղաքական աշխատանքներում փորձ էր կատարվում հասարակական հոգեբանության և գիտակցության մեջ այն առավել ամրապնդել: 1960-ական թվականներից սկսած՝ թերևս այդ գործի առաջնեկներից մեկը Հ. Հակոբյանն էր: Միգուցե հասարակական գիտակցության մեջ այս նստվածքն էր պատճառը, որ, ի վնաս մեզ, 1980-ական թվականներին ԽՄԿԿ կենտկոմի պլենումներից մեկում արձանագրվեց, որ Հայաստանում ցածր հիմքերի վրա է դրված աթեիստական դաստիարակությունը: Այդ մասին Հ. Հակոբյանը կանխազգացել էր վաղուց և իր տեսակետը 1980-ական թվականների վերջում ներկայացնում է հետևյալ կերպ. «Հայաստանն ուներ մի շարք առանձնահատկություններ, որոնք զգալիորեն դժվարացնում էին աթեիստական մտքի տարածումը, և՛ սահմանափակում, և՛ խոչընդոտում աթեիստ մտածողների բացահայտ հակակրոնական, հակաեկեղեցական գործունեությունը: Այդ առանձնահատկությունները ամենից առաջ պայմանավորված էին հայ ժողովրդի պատմական ճակատագրով»¹⁹: Ներկայիս արժեհամակարգի տեսանկյունից այդ փաստը պետք է արձանագրել որպես դրական միտվածություն: Փոյթ չէ, որ քննադատվեցինք անցողիկի ու ժամանակավորի համար, արդյունքում շահեց մնայունը, արժեքավորը: 1970-ական թվականների սկզբին, լինելով ուսանող, իսկ կեսից ու այնուհետև՝ որպես քաղաքական-կուսակցական համակարգում ընդգրկված աշխատակից, մեր սերնդի անունից, առանց վարանելու, կարող եմք ասել, որ այդ ժամանակներում զգում էինք հոգևոր քաղց, որին ներկայիս սերունդը դժվարությամբ կհավատա: Առավել դժվար է հավատալ այն խոստովմանքին, որ Աստվածաշնչի բացակայության պայմաններում այդ «քաղցը» լրացվում էր աթեիզմի դասագրքերի ու դասավանդման ընթացքում (ճշմարտությունը պահանջում է ասել՝ ոչ բոլոր դասավանդողների պարագայում): Գրեթե առեղծված է, բայց իրողություն: Աթեիզմի դասագրքերը այն եզակի գրականությունն էր, որի միջոցով ծանոթանում էինք վաղ կրոնական հավատալիքների ձևերին, համաշխարհային կրոններին, նրանց պատմությանը, դավանանքին ու ծիսակարգին, միաժամանակ՝ գիտելիք ստանում աղանդների մասին: Այս թեմաները հետաքրքրում էին ուսանողներին, երկրորդ մասը գրեթե անտեսվում էր, որը վերաբերում էր աթեիստական դաստիարակության հարցին: 1960-ական թվականների կեսերից ի վեր ուսանող եղած սերնդի հիշողության մեջ, որոնց դասավանդել է Հրանտ Հակոբյանը, անջնջելի են նրա պատկերավոր դասախոսությունները: Հակոբյանն ասում էր, որ «մենք գիտելիք էինք տալիս կրոնի մասին՝ այն քննադատելու նախապայմանով, բայց մի կողմ էինք թողնում քննադատությունը, ուստի ստացվում էր բոլորովին այլ գիտելիքի մատուցում....», ինչի մասին արդեն նշեցինք: Նման արտահայտություն կարող էր անել այն անձնավորությունը, որը ականատեսների վկայությամբ, իր հոր՝ Ուստա Խաչատուրի և եղբոր հետ հայրենի գյուղում 1960-ական թվականներին վերանորոգել էր մատուռ՝ որպես աղոթատեղի: Ակնհայտ էր, որ Հրանտ Հակոբյանը իր ուսանողներին համաշխարհային կրոնների, նրանց դավանաբանության, աղանդների դեմ պայքարի, քրիստոնեական արժեքների մարդասիրական բնույթի մասին գիտելիքներ էր հաղորդում, իսկ քրիստոնեության մասին գիտելիքներով քարոզվում էր հայրենասիրու-

¹⁹ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 108:

թյուն: «Աշխարհի ամենամեծ իմաստությունը պարունակում է Աստվածաշունչը»։ սիրում էր կրկնել Հակոբյանը: 1980-ական թվականների վերջից Հրանտ Հակոբյանի ու իր սերնդակիցների մոտ ներդաշնակվեցին աշխարհայացքն ու համոզմունքը, որոնց նախադրյալներին արդեն անդրադարձանք: Ուստի, համոզված կարելի է ասել, որ յուրաքանչյուր սերունդ, առավելա՝ սերնդի մտավորական ներկայացուցիչներն իրենց գիտակցական կյանքի ընթացքում անցնում են վերափոխումների և վերաարժևորումների փուլեր: Սա օբյեկտիվ, օրինաչափ ընթացք է, քանի որ միմյանցից տարբեր իրականության մեջ են անցել մանկությունը, երիտասարդությունն ու հասուն տարիքը: Զուտ հոգեբանական առումով ու աշխարհայեցողության տեսանկյունից փորձի և իմաստության տարիներին անգամ սիրտն ու զգացմունքը դարձյալ հակված էին մնալու կամ «տեղափոխվելու» մի այլ իրականություն, ասել է՝ մանկության և երիտասարդության ժամանակները: Աշխարհընկալման և աշխարհայացքային այս ընթացքը անընդհատ վերականգնում են մարդուն, նրան մղում դավանելու ոչ թե անցողիկ, այլ կայուն արժեքների, կյանքի անցողիկ բնույթին հակադրելու մնայուն արժեքներ ու բարձր չափանիշներ: Մնայուն արժեքները, որպես օրինաչափություն, անբարենպաստ պայմաններում մնում են խորքում, «թաքնված», ստվերում քողարկված կամ շղարշված՝ այլ մտքերի ներքո: Ասելիքս վերաբերում է նրան, որ խորհրդային գաղափարախոսության պայմաններում հազվադեպ կարելի էր հանդիպել մենագրությունների, որոնք հասարակության ու ազգի կյանքում կրոնի և հոգևոր դասի ունեցած դերի մասին դրական մտքեր բովանդակեին: Նման հազվադեպ մտքերի մեքը հանդիպում ենք Հ. Հակոբյանի աշխատություններում. «Դարեր շարունակ աշխարհիկ պետական իշխանության բացակայության պայմաններում հայ ժողովրդին ղեկավարում, կառավարում էր եկեղեցին: ...Արևմտյան Հայաստանում հայության կյանքում մեծ էր Կ. Պոլսի պատրիարքության, Արևելյան Հայաստանում՝ Էջմիածնի կաթողիկոսության դերը»²⁰: Հակոբյանը միաժամանակ նկատում է, որ հոգևոր դասի որոշ առաջադեմ ներկայացուցիչներ հանդես էին գալիս ազգի շահերի պաշտպանությամբ՝ ընդդեմ ցարական Ռուսաստանի և թուրքական բռնակալական ձուլման քաղաքականության և միջոցներ էին ձեռնարկում ժողովրդի թշվառ վիճակը թեթևացնելու համար: Իսկ այն դեպքում, երբ «դրան գումարվում էին կրոնական հավատալիքները, և ժողովուրդը բարյացակամորեն էր տրամադրվում կրոնի, եկեղեցու հանդեպ»²¹, ապա կարծում ենք՝ կրոնի հանդեպ վերաբերմունքն ամբողջանում է: Հայ ժողովրդի կյանքում հոգևոր դասի դրական դերակատարության օգտին պրոֆեսոր Հակոբյանը բերում է մի ծանրակշիռ փաստարկ ևս. «...բռնակալների դեմ ժողովրդի մղած ազատագրական կռիվները հոգևորական մատենագետների կողմից ներկայացված էին որպես կրոնական պատերազմներ: Այսպիսով, փաստորեն, կրոնին վերագրվում էր ազգապահպան դեր»²²: Սրանով իսկ Հակոբյանն այն միտքն է հաստատում, որ հավատի գործոնը դրսևորվում է անհատի, հասարակության,

²⁰ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 108:

²¹ Տե՛ս **Հակոբյան Հ. Խ.** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Երևան, 1989, էջ 108:

²² Նշվ. աշխ., էջ 108:

ազգի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող դեպքերում: Տվյալ պարագայում Հակոբյանը կրոնի և եկեղեցու դերը գնահատում է հասարակության մեջ և անհատի կյանքում նրանց իրականացրած գործառնություններով, գրաված տեղով, որոնք անընդհատ կարող են փոփոխվել, որովհետև պայմանավորված են ազգի և հասարակության մեջ ընթացող մի շարք գործընթացներով: Հավատը միշտ լավատեսական կողմնորոշվածություն ունի և այդ հավատն է, որ մարդուն ապրելու, արարելու հույս է ներշնչում, օգնում դիմակայել, մաքառել և երբեմն հաղթել ամենամահավանական պայմաններում: Որպես կանոն, հավատը առաջանում է հավանական իրավիճակներում, այն գիտելիքի, իրադարձության, երևույթի, ապագայի նկատմամբ, որոնց գոյության ճշմարտացիությունը ապացուցված չէ, որոնց լուծումները միանշանակ չեն: Հավատի մշտական ուղեկիցներն են սերը, հույսը և վստահությունը: Վերոնշվածներն այնքան ակնառու էին Հրանտ Հակոբյանի տեսական, պրակտիկ գործունեության մեջ, կեցվածքում, կրթադաստիարակչական և քարոզչական աշխատանքներում, որ, իր իսկ պատկերավոր արտահայտությամբ, ամենուր «...ուղղակի ծորում էին»: Նման դիրքորոշման դեպքում էական չէ, թե տվյալ տեսաբանը ինչ տեսանկյունից է վերաբերում կրոնի ծագման, արմատների մասին հարցին: Հակոբյանը կրոնի ծագումը տեսնում է նրա վաղ ձևերի, մոգության, ֆետիշիզմի, անիմիզմի ու անտիմիզմի մեջ, բազմաստվածությունից դեպի միաստվածություն էվոլյուցիոն զարգացման համատեքստում: Սրան հավելում ենք նաև կրոնի առաջացման իմացաբանական, հոգեբանական և սոցիալ-տնտեսական արմատների պարզաբանումը: Հրանտ Հակոբյանին հաճախ էին հարց տալիս և՛ ուսանողները, և՛ գործընկերները. «Ինչպիսի՞ն է Աստծո մասին Ձեր պատկերացումը»: Միշտ հետևում էր միևնույն պատասխանը. «Ես հավատում եմ բնագանցական ուժերին: Այն կա»: Իսկ թե ինչպես էր այն պատկերացնում, ապա այդ մասին նշում է. «Այն, ինչ ոչ կարող ես հերքել, ոչ հաստատել փորձով և որը անմիջականորեն չի ընկալվում զգայարաններով, մնում է հավատալ և վերջ»: Էմանուել Կանտի փիլիսոփայության հանդեպ Հակոբյանը ընդգծված համակրանք ուներ: «Աստված», «ոգի», «ազատություն» հասկացությունները մեկնաբանելիս՝ հաճախ անդրադառնում է Կանտին: «Կա, արդյո՞ք, Աստված, ոգի և ազատություն» հարցին Կանտը պատասխանում է, որ դրանք հավերժ անճանաչելի են, ոչ մարդկային ունակությունների ու կարողությունների զարգացումը, ոչ գիտության ու տեխնիկայի ապագա վերընթացը այդ հարցի պատասխանը չեն կարող տալ, դրանք իրեր են իրենց համար, կանոնյալ բառապաշարով՝ «ինքնին իրեր»: Հոգու ինքնուրույն գոյության վերաբերյալ նշածին Հակոբյանն ավելացնում էր «լեւինիդրադյան դպրոցի» կատարած փորձն ու վիճակված ճակատագիրը, որն իր հերթին լսել էր Մինսկում՝ որակավորման բարձրացման դասընթացների ժամանակ, ականավոր փիլիսոփաներից:

Հրանտ Հակոբյանը ազատության և անկախության ջատագովն էր, չնայած դրան՝ նա երբեք չփնտլեց խորհրդային ժամանակներում Հայաստանի ձեռքբերումները քաղաքաշինության, տնտեսության՝ արդյունաբերության զարգացման, և հատկապես մշակութային բնագավառներում: Ազատությունը տեսնում էր մշակույթի ոլորտում, հենքը՝ հայոց այբուբենի, մաշտոցյան գրերի և քրիստոնեության՝ պետական կրոնի մեջ: Մշակութային այս ազատությունն էլ ծնեց ան-

կախության ձգտումը հասարակական գիտակցության մեջ, այն է՝ հանգեցրեց տնտեսական և քաղաքական ազատության ձեռքբերմանը: Հակոբյանն համոզված էր, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը մշակութային հեղաշրջում էր հայ ազգի գիտակցության ու աշխարհայացքի մեջ: Նա շեշտում էր, որ մեր կրոնը, մեր հավատքը պետք է ամուր պահենք: Պատմությունը կողոպտելու ու թալանելու ամենամեծ սպառնալուծությունն է, նյութականը հնարավոր է կողոպտել ու թալանել, իսկ լեզուն, գիրն ու կրոնը մնայուն են: 1990-ական թվականների սկզբներին, երբ Հայաստանում ընդունվեց խղճի և դավանանքի ազատության մասին օրենքը, միանգամից ակտիվացան և իրենց քայքայիչ գործունեությունը ծավալեցին բազմաթիվ աղանդավորական խմբեր հանրապետությունում և տարածաշրջանում: Ստեղծված իրադրության պայմաններում շատերը դժվարանում էին սահմանազատել ճշմարիտ հավատքը աղանդներից: Եկեղեցական գործիչների նվազ քանակությունը տարածաշրջանում բավարար չէին աղանդների դեմ պայքարելու համար: Դեկավար պաշտոններ զբաղեցնող մի շարք ընկերներ աղանդների նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքով հանդերձ՝ բավարար գիտելիքներ չունեին աղանդների ծագման պատճառների, դրանց տարատեսակների և առանձնահատկությունների մասին: Քաղաքապետարանում աշխատելով՝ ինքս բազմիցս խնդրել եմ Հակոբյանին զրույց-զեկուցումներով հանդես գալ ազգաբնակչության առջև և ոչ մի անգամ չի մերժել, դեռ ավելին՝ ինքն է հանդես եկել նոր ու արժեքավոր առաջարկություններով: Աղանդավորական խմբի անդամները ցուցաբերում էին ագրեսիվություն եկեղեցական գործիչների, գիտնականների նկատմամբ: Հակոբյանի մեծ հեղինակությունը, հավատքի և կրոնի նկատմամբ նրա ազդեցիկ խոսքն էր, թե կեցվածքը, կամ, գուցե բոլորը միասին, սակայն աղանդավորական շարժման ներկայացուցիչները ծպտուն չէին հանում: Հրանտ Հակոբյանին ժամանակի հոսքի մեջ արժևորելու համար անհրաժեշտ է զատել նորաձևությունը նորանալուց: Նորաձևությունը կենցաղ է, որը փոխվում է օրվա հետ, մինչդեռ նորանալն ու նորոգվելը՝ անհրաժեշտություն է, որը պարտադրում է ժամանակը, հակառակ դեպքում մարդը կհնանա, ասպարեզից դուրս կգա և ինքնին այլևս հետաքրքրություն չի ներկայացնի ոչ որպես անհատ, և ոչ էլ որպես հանրության անդամ, առավելա՝ մասնագետ կամ գիտնական: Այս հարցում կյանքի փորձով իմաստացած պրոֆեսոր Հակոբյանը նույնը սովորեցնում էր երիտասարդ սերնդին: Նրա խոսքը հավաստվում էր կոնկրետ գործով: Հրանտ Հակոբյանին մեր տարածաշրջանում անվանում էին Արքա՝ մարդկային իր արժանիքների և իր կեցվածքի համար: Մենք կհավելենք, որ, եթե արքաները տարածք էին նվաճում և կայսրություններ ստեղծում հրով ու սրով, ապա Հակոբյանը կրթամշակութային մի ողջ տարածք ստեղծեց՝ մաքուր խղճով և արդար ձեռքբերով: Անձի վաստակը գնահատվում է պետական մարմինների և պաշտոնատար այրերի կողմից: Այս առումով Հակոբյանը պատշաճ գնահատվել է, բայց կա մեկ ուրիշ՝ առավել բարձր ու կարևոր գնահատական, դա ժողովրդի օրինանքին արժանանալն է, որին բոլորը չէ, որ արժանանում են: Սա ամենամեծ ժառանգությունն է, որը թողնվում է սերունդներին: Ժողովրդից ստացած պարգևը ժողովրդին մատուցած ծառայություններով վերադարձնելը ամենամեծ վաստակն է, մարդկային կյանքի իմաստը:

Պատմության փիլիսոփայությունը որոնող, համաշխարհային պատմության,

փիլիսոփայության ու գրականության հսկաներին քաջածանոթ Հրանտ Հակոբյանը չէր կարող չորջանցել անմահության հիմնահարցը, գտնելով, որ անմահությունը հենց այնպես չի տրվում, յուրաքանչյուր անհատ այն տրճանքով է վաստակում: Անմահության իմաստը ժամանակի անընդհատ հոսքի գիտակցումն է, որի մեջ երկրային կյանքը սոսկ ակնթարթ է: Կենսաբանորեն մահկանացու անհատը անմահ է մշակութային առումով: Անմահությունը հավերժության սկիզբն է ու ընթացքը: Հավերժությունը, հերթագայող սերունդների համար, ընթացող իրական ժամանակի հոսքից դուրս գտնվող ժամանակն է: Հավերժության ճանապարհով են ընթանում միայն այն անհատները, ովքեր նախ իրենց գործի ծառան են, հետո միայն տերը: Հրանտ Հակոբյանը՝ իր գիտական, տեսական ու սոցիալական փորձը սերունդներին ժառանգելով, բռնեց այդ երկար ու չընդհատվող ճանապարհի ուղին:

Փա՛նք ու պատի՛վ հավերժի բոլոր ճամփորդներին:

Երջանիկ են բոլոր նրանք, ովքեր հաղորդ են եղել իրական հրաշքին՝ Հրանտ Խաչատուրի Հակոբյան երևոյթին:

О ВОПРОСАХ НАУЧНОГО НАСЛЕДИЯ АКОПЯНА ГРАНТА ХАЧАТУРОВИЧА И ПЕРЕДАЧИ СОЦИАЛЬНОГО ОПЫТА ПОКОЛЕНИЯМ

Г. Г. КАДЖОЯН

В статье с целью выявления наследия Гранта Акопяна проанализированы не только монографии и статьи ученого – философа, но и исследованы его лекции. Особое внимание уделено предмету философии, взаимовлиянию и взаимосвязи мифологии, религии и философии, дан также анализ функции передачи грядущим поколениям социального опыта.

Г. Акопян в армянской действительности стал одним из первых основоположников широкомасштабных исследований философских взглядов армянских писателей, и эта его деятельность остается непревзойденной до сегодняшнего дня.

В статье отмечается также, что Г. Акопян придерживается того мнения, что именно благодаря историческим познаниям мы познаем человеческую личность во всей его полноте, и в связи с этим ученый раскрыл все ключевые философские вопросы истории.

В статье отмечается также, что Г. Акопян придерживается иного мнения, что именно благодаря познаниям истории мы познаем человеческую личность во всей его полноте, и благодаря этому он раскрывал все краеугольные философские вопросы истории.

ON THE ISSUE OF SCIENTIFIC INHERITANCE AND THE TRANSFER OF SOCIAL EXPERIENCE OF HRANT KHACHATUR HAKOBYAN TO THE GENERATIONS

H. G. GHAJOYAN

In order to reveal the scientific inheritance of Hrant Khachatur Hakobyan in the article not only his printed monologues and articles have been analyzed but also his lectures. Attention is paid to the analysis on the transfer of social experience to the generations, the interrelations between mythology, religion and philosophy, perception of the subject. In Armenian reality Hakobyan was the first to study the philosophical views of the Armenian writers which is unsurpassed up to now. It is mentioned in the article that human existence is admitted as an entity owing to the knowledge of history and by means of which Hakobyan revealed the main questions of the philosophy of history.